Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան

15.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Ա. Մելիքսեթյանի
Հ. Մանուկյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել է տարբերակ 10-ի նյութական իրավունքի բաժնի թեստի 3"35-րդ, 15"10-րդ, 19"13-րդ, 23"30-րդ, 24"55-րդ, 34"61-րդ, 35"31-րդ, 36"45-րդ, 31"27-րդ հարցերը:

35-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի կողմից առավելապես մեջբերվել է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ առանց դրանք խնդրի փաստական հանգամանքների հետ համակցման, բացակայում են ինքնուրույն վերլուծությունները, որպեսզի պայմաններում հանձնաժողովի համար հասկանալի չէ, թե ինչու է հավակնորդը նշել Դ-ը տարբերակը, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

10-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները կրկնում են ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտած դիրքորոշումները, մյուս կողմից խնդրի պայմանների ոչ հստակությունը թույլ չի տալիս գալ միանշանակ եզրահանգման, ուստի նշվածը մեկնաբանելով հօգուտ հավակնորդի , տրվում է 1 միավոր:*

13-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի փաստարկումը չի բխում խնդրում ներկայացված փաստերի իրավական վերլուծությունից, փվյալ դեպքում առկա է հանցագործությունների համակցություն, քանի որ խնդրի պայմաններից երևում է, որ Թ-ի*

կողմից առկա է նաև հրազենը պահելու դիտավորություն: Բացի այդ, հավակնորդի հիմնավորումները հակասում են միմյանց, եզրահանգման համար փաստարկները հասկանալի չեն, ուստի գնահատականը չի բարձրացվում:

30-րդ հարցի վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները ընդունելի չեն, քանի որ անկախ նրանից, թե ինչ եղանակով է կատարվում դրդչությունը, եթե դա արդյունքում հանգեցնում է հանցանքի կատարման /արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների բացակայության պայմաններում/, արարքը պետք է որակել որպես դրդչություն: Հետևաբար հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ հիմնավորումները դրդչության բացակայության մասով ՀՀ քրեական օրենսդրության նորմի սխալ մեկնաբանության արդյունք են, ուստի գնահատականը չի բարձրացվում:

55-րդ հարցի վերաբերյալ թեև հավակնորդի հիմնավորումներն առ այն, որ առկա է չհաջողված հանցակցության երկու տեսակ, ընդունելի է: Սակայն, հաշվի առնելով, որ ընտրված տարբերակը, մեջբերված իրավադրությունները և եզրահանգումները չեն համապատասխանում միմյանց, հետևաբար գնահատականը չի բարձրացվում:

61-րդ հարցի վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, այն պատճառաբանությամբ, որ խնդրում առկա պայմանների պարագայում տարածության մեջ քրեական օրենքի գործողության որևէ սկբունք կիրառելի չէ, այլ կերպ՝ հավակնորդի կողմից սխալ են մեկնաբանվել տարածության մեջ քրեական օրենքի գործողության դրույթները, ուստի գնահատականը չի բարձրացվում:

31-րդ հարցի վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները չեն բխում խնդրում առկա փաստերից, քանզի քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ որևէ հանգամանք առկա չէ: Միևնույն ժամանակ հավակնորդը Գ-ի և Դ-ի արարքները չի քննարկել կաշառք սրանալու և տալու համատեքստում, այն պայմաններում, երբ կաշառքի առարկա կարող են լինել նաև սեքսուալ բնույթի ծառայությունները, ուստի գնահատականը չի բարձրացվում:

45-րդ հարցի վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի են, ուստի տրվում է 1 միավոր:

27-րդ հարցի վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները խնդրի ձևակերպման մեջ տեղ գտած անճշտության պարագայում, ընդունելի են հանձնաժողովի համար, ուստի տրվում է 1 միավոր:

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ***1953*** ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակիորեն, նյութական իրավունքից ստացված 18 միավորը բարձրացնել 3 միավորով՝ արդյունքում արձանագրել 21 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ